

**ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ԱՆՎՃԱՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

19.06.2024 17:14



Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհուրդը հայտարարում է Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով նախատեսված աշխատասենյակից՝ 2024 թվականի հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածում **անվճար** օգտվելու համար **հայտեր** ներկայացնելու ժամանակահատված:

Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են 2024թ-ի հունիսի 19-ից մինչև 26-ը ներառյալ: Հայտերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) info@advocates.am էլ. հասցեին, ինչպես նաև կարող են ներկայացվել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեում: Փոստով ուղարկված հայտերն ընդունված չեն համարվի, եթե հասցեատերը փոստային առաքանին փաստացի ստանա 2024 թվականի հունիսի 26-ից հետո:

Տեղերը սահմանափակ են. առկա է ընդամենը 20 աշխատատեղ:

Ծրագրով սահմանված պահանջներին համապատասխանող հավակնորդների հետ կանցկացվի հարցազրույց: Հարցազրույցը կանցկացվի 2024 թվականի հունիսի 27-ին, ժամը 12:00-ից սկսած՝ հայտատուների հետ նախապես համաձայնեցված ժամին:

**Հիշեցում.** ՀՀ ՓՊ Երիտասարդական խորհրդի կանոնադրքի համաձայն՝ Երիտասարդ փաստաբան է համարվում (1) ոչ ավել, քան երեք տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանը՝ անկախ տարիքից, ինչպես նաև (2) մինչև երեսուհի տարեկան փաստաբանը՝ անկախ փաստաբանական ստաժից:

Ծանուցում

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի իրականացումն ուղղված է Երիտասարդ փաստաբանների մասնագիտական ոլորտում ինտեգրման գործընթացին աջակցելուն:

Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատի

Երիտասարդական խորհրդի կողմից ընտրված փաստաբանները հնարավորություն կստանան իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնել ք. Երևան, Ջաքյան 7, 2-րդ հարկ, թիվ 9 սենյակ հասցեում գտնվող աշխտասենյակում, որը տրամադրվելու է անվճար: Մինչույն ժամանակ, հասարակությանն անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով, Աշխատասենյակն օգտագործելու ժամակահատվածում, յուրաքանչյուր Շահառու կիսամյակի ընթացքում պետք է Հանրային պաշտպանի գրասենյակի առաջարկով անվճար իրավաբանական օգնություն տրամադրի քաղաքացիներին:

## **Հայաստանի Հանրապետության**

### **փաստաբանների պալատի**

### **Երիտասարդական խորհուրդ**

## **Բեռնել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը**

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```